ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

ՀՀ կրթության և գիտության նախարարարություն/ հասցե՝ Վ. Սարգսյան 3/, 2018 թ. հունիսի 6-ին, ժամը՝ 15^{00}-17^{00}

2) Նիստի օրակարգը՝

1) ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգով սահմանված՝ խորհրդի անդամների ռոտացիայի հարցի քննարկում և իրականացում:

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների տվյալները՝

Նախարարին կից հասարակական խորհրի 24 անդամից նիստին մասնակցել է 21-ը՝

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հովհաննես Հովհաննիսյան	ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ
Իռեն Սարգսյան	Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ
Թամարա Սաղաթելյան	«Լուսնյակ» հասարակական կազմակերպություն
Հովիկ Մուսայելյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Էմին Երիցյան	Հայաստանի համայնքների միություն
Արևիկ Սարգսյան	Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում

Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների միություն
Սուսաննա Թադևոսյան	Հույսի կամուրջ
Դիանա Հովսեփյան	Հայ օգնության միություն
Կարինե Թումանյան	Հանրային խորհուրդ
Արամ Ծատուրյան	ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր մասնագետ
Խորեն Ոսկանյան	ՀՀ Արմավիրի թիվ 6 հիմնական դպրոցի ներառական կրթության համակարգող-սոցիալական մանկավարժ
Ատոմ Հակոբյան	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրեն
Հովհաննես Թոքմաջյան	Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար
Ազատ Հոկոբյան	Արարատի պետական քոլեջի դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն
Յաշա Սահակյան	ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն
Ժորա Ջհանգիրյան	Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր
Հասան Թամոյան	Եզդիների ազգային միություն հ/կ
Բորիս Մակիչյան	Երևանի Հյուսիսային համալսարան
Արթուր Աղաբաբյան	Մ. Խորենացու անվան համալսարան
Արմեն Բալդրյան	ՏՀՏ գործատուների միության նախագահ

Հրավիրված անձինք՝

Արթուր Բաղդասարյան	ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ
Լուսինե Գրիգորյան	ԿԳՆ իրավաբանական վարչության պետ
Լուսինե Մարգարյան	ՀՀ ԿԳ նախարարի մամուլի խոսնակ

Հեղինե Հովհաննիսյան	ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ
ՀԿ Կենտրոն	Միեր Սանթոյան

4) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները՝

Նիստի սկզբում խորհուրդը հաստատել է օրակարգը, այն է՝ ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգով սահմանված՝ խորհրդի անդամների ռոտացիայի հարցի քննարկում և իրականացում:

Նիստը վարել է ԿԳ նախարարի տեղակալ Հովհաննես Հովհաննիսյանը: Ողջունելով ներկաներին՝ փոխնախարարը նշել է, որ ԿԳՆ-ն անչափ կարևորում է հանրային կարծիքը. «Բոլոր այն առաջարկներն ու քննադատությունները, որոնք կբարձրացնեն հասարակական խորհրդի անդամները, անպայման հաշվի կառնվեն և իրենց ազդեցությունը կունենան որոշումների կայացման վրա: Ավելին՝ մենք փորձում ենք հաշվի առնել յուրաքանչյուր քաղաքացու կարծիքը, բոլորին լսել, նրանց հետ խորհրդակցել, որը, իհարկե, մեծ ջանքեր է պահանջում: Բայց քանի որ այս հեղափոխությունը տեղի ունեցավ հասաարակության համախմբման արդյունքում, հետևաբար հանրային կարծիքը չափազանց կարևոր է»-,նշել է Հովհաննես Հովհաննիսյանը:

Համաձայն հասարակական խորհրդի աշխատակարգի՝ երկու տարին մեկ անգամ խորհրդի անդամների մեկ երրորդը ենթարկվում է ռոտացիայի: ՀՀ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Արթուր Բաղդասարյանը և իրավաբանական վարչության պետ Լուսինե Գրիգորյանը խորհրդի անդամներին են ներկայացրել ռոտացիայի կարգը: Արտահերթ նիստի ընթացքում իրականացված վիճակահանության արդյունքում ութ անդամ դուրս է մնացել խորհրդի կազմից /Կարինե Թումանյան /Հանրային խորհուրդ/, Ժորա Ջհանգիրյան/Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր/, Յաշա Սահակյան /ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն/.

Խորեն Ոսկանյան /ՀՀ Արմավիրի թիվ 6 հիմնական դպրոցի ներառական կրթության համակարգող-սոցիալական մանկավարժ/, Իռեն Սարգսյան /Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ/, Արամ Ծատուրյան /ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր մասնագետ/, Ազատուհի Սիմոնյան /ԼՂՀ փոխվարչապետի իրավախորհրդատու/, Բորիս Մակիչյան /Երևանի Հյուսիսային համալսարան/:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.

Նիստի մասնակիցները շնորհակալություն են հայտնել խորհրդի կազմից դուրս մնացած անդամներին՝ նրանց ակտիվ գործունեության և համագործակցության համար:

Խորհուրդն առաջարկել է նախագահին, առաջնորդվելով հասարակական խորհրդի աշխատակարգի 11-րդ կետով /խորհրդի նախագահը կարող է իր նախաձեռնությամբ խորհրդի նվազագույն կազմից բացի որպես խորհրդի լրացուցիչ անդամ ընդգրկել այլ շահագրգիռ անձի՝ վերջինիս համաձայնությամբ, եթե գտնում է, որ տվյալ անձի մասնակցությունը կարող է էական նշանակություն ունենալ խորհրդի ընթացիկ աշխատանքների համար/, խորհրդի կազմում կրկին ընդգրկել դուրս մնացած անդամներին:

Բացի այդ, նշվել է, որ խորհրդի կազմում նոր անդամներ ընդգրկելու նպատակով նախարարությունը սահմանված ժամկետներում հայտարարել էլ մրցույթ: Ստացված հայտերի և այսօր իրականացված ռոտացիայի արդյունքում կձևավորվի ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նոր կազմ:

Նիստի նախագահող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ Արայիկ Հարությունյան

Արձանագրող՝ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ Հեղինե Հովհաննիսյան